ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2022-2023
Հայոց լեզու (8-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

Արբայական խոսքը մեր կմնա հավետ...

Վահան Տերյան

Կարդա՛ գրվածքը (տեքստը):

ՀԵՔԻԱԹ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

Մի գահավ ու անհոռնի ոստիկ սիրահարվել էր հրաշեկ արեգակին: Ոստը գիշեր-ցերեկ միայն արևի մասին էր մտածում. գոնե մեկ անգամ նրա բարկ համբույրին արժանանալու տենչով էր ապրում: Նրա սիրտը լի էր անհուն սիրով, բայց նա շատ դժբախտ էր, որովհետև, ավա՜ղ, սերն անպատասխան էր: Ոստը փոխադարձ սիրո հույս չէր փայփայում: Զէ՞ որ արեգակն այնքա՜ն հրաշագեղ բաներ ուներ երկրի վրա՝ գունեղ ծաղիկներ, սաղարթախիտ և բարձրաբերձ ծառեր, որ արգահատելի ու դժգույն ոստը չէր կարող նրա չնչին ուշադրությանն արժանանալ:

Ոստիկը չէր հուսահատվում: Սա համառ ու իր նպատակին հետամուտ մեկն էր: Ողջ ուժով ձգվում էր դեպի արևը. արմատները մխրճում էր հողի մեջ, վերցնում անհրաժեշտ սնունդ, արևի ճառագայթներից կառչած՝ վեր ձգվում:

Համառությունը հաղթեց: Անհրապույր ոստիկը աճեց, աճեց ու դարձավ գեղուղեշ և շքեղաշուք լորենի: Հիմա ոչ ոք չի հիշում այլանդակ ոստիկին:

Այո՛, սերն ամենակարող է...

1. Տեքստում գտի՛ր, դո՛ւրս գրիր տրված բառերի հոմանիշները (3 միավոր):

Անպարագիծ----------

Խոկալ----------

Մարմաջ----------

Տխեղծ----------

Խղճուկ----------

Թունդ----------

2. Տեքստում գտի՛ր հականիշ բառերի զույգեր և դո՛ւրս գրիր (1 միավոր):

---

3. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր արմատի կրկնությամբ կազմված երկու բառ, դրանց արմատներով կազմի՛ր 2-ական ուրիշ բառեր (3 միավոր):

---

4. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր հուր, ձիգ, սուն արմատներն ունեցող բառերը, ճի՛ր հնչյունափոխությունը (3 միավոր):

---

5. Տեքստում գտի՛ր համառոտ նախադասությունները, դո՛ւրս գրիր, դրանք դարձրո՛ւ ընդարձակ՝ մեկի մեջ ավելացնելով հետադաս որոշիչ և ժամանակի պարագա, մյուսի մեջ՝ բացահայտիչ և ձևի պարագա (4 միավոր):

---

6. Վերևում տրված տեքստի վերջին նախադասությունը դարձրո՛ւ վերնագիր և գրի՛ր էս կարծիքը սիրո զորության մասին (6 միավոր):